ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

18 հուլիսի 2023թ. **N 17-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԼՐԱԳՐՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված լրագրողի վկայականի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2023թ. հուլիսի 18–ի N 17-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այսուհետ՝ լրագրող)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) հավատարմագրման գործընթացը և հավատարմագրված լրագրողի՝ ընտրական հանձնաժողովներում գործունեության կազմակերպման հիմնադրույթները:

2. Լրագրողների հավատարմագրումը Հանձնաժողովում իրականացվում է «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

Հավատարմագրված լրագրողի գործունեությունը Հանձնաժողովում կարգավորվում է «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով՝ խոսքի ազատության ապահովման նպատակով և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

1) որևէ ձևով կամ եղանակով չի իրականացնում լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն.

2) չի կարող խոչընդոտել լրագրողի օրինական գործունեությանը.

3) հավատարմագրված լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ.

4) լրագրողների համար նախատեսված տեղեկատվությունը լրագրողներին տրամադրում է միաժամանակ.

5) հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տեղեկացնում է Հանձնաժողովի այն միջոցառումների ժամանակի և անցկացման վայրի մասին, որոնց կարող են ներկա գտնվել լրագրողները:

Տեղեկատվությունը լրագրողին փոխանցելու պատշաճ ձև է համարվում էլեկտրոնային փոստով հաղորդումը: Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը տեղադրված է Հանձնաժողովի համացանցային կայքում, ապա լրագրողն այդ մասին տեղեկացվում է, և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում:

4. Հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման և հավատարմագրված լրագրողների գործունեության կազմակերպման համար պատասխանատու է Հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարը (այսուհետ՝ մամուլի քարտուղար):

5. Հանձնաժողովի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է հայտարարություն հավատարմագրումն սկսելու մասին: Հայտարարության մեջ նշվում է դիմումների ներկայացման վերջնաժամկետը և հավատարմագրման ժամկետը:

Հանձնաժողովում լրացուցիչ հավատարմագրում կատարվում է, եթե զանգվածային լրատվամիջոցն իր գործունեությունն սկսել է իրականացնել վերջին հավատարմագրման գործընթացից հետո կամ հավատարմագրված լրագրողի փոխարեն այլ լրագրողի հավատարմագրելու մասին դիմում է ներկայացրել:

6. Լրագրողի հավատարմագրումն իրականացվում է դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

7. Լրագրողին հավատարմագրելու նպատակով լրատվական գործունեություն իրականացնողը գրավոր դիմում է ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով.

1) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրի հասցեն, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում), հանրային ծառայության համարանիշը և մշտական բնակության վայրի հասցեն.

2) հավատարմագրման ներկայացվող լրագրողի (լրագրողների) ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում), զբաղեցրած հաստիքը (լրագրող, լուսանկարիչ, տեսաձայնագրման օպերատոր), հանրային ծառայության համարանիշը և բնակության վայրի հասցեն.

3) զանգվածային լրատվության միջոցի (միջոցների) անվանումը, որին (որոնց) պետք է ներկայացնի հավատարմագրված լրագրողը.

4) հավատարմագրման ներկայացվող լրագրողի անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ) պատճենը և երկու լուսանկար՝ 3x4 չափսի.

5) լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի էլեկտրոնային փոստի հասցեները, հեռախոսահամարները:

8. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչը հավատարմագրման համար սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դիմումին կից պետք է ներկայացնի նաև Հայաստանի Հանրապետությունում լրագրողի հավատարմագրման՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված վկայականի պատճենը:

9. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի համար Հայաստանի Հանրապետության հավատարմագրում չի պահանջվում, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով գործում է տվյալ լրատվական

գործունեություն իրականացնողի առանձնացված ստորաբաժանումը, որի անունից ներկայացվել է հավատարմագրման դիմումը:

10. Յուրաքանչյուր լրատվամիջոցից կարող է հավատարմագրվել ոչ ավելի, քան չորս ներկայացուցիչ՝ երկու լրագրող և երկու լուսանկարիչ կամ տեսաձայնագրման երկու օպերատոր:

11. Հավատարմագրումն իրականացվում է տարին մեկ անգամ՝ մեկ տարի ժամկետով: Եթե զանգվածային լրատվամիջոցի լրագրողը հավատարմագրվում է Հանձնաժողովում լրացուցիչ հավատարմագրմամբ, ապա հավատարմագրումն իրականացվում է մինչև տվյալ տարվա համար հավատարմագրված լրագրողների հավատարմագրման վերջնաժամկետն ընկած ժամկետով:

12. Մամուլի քարտուղարը վարում է լրագրողների հավատարմագրման մատյան:

Լրագրողին (լրագրողներին) հավատարմագրելու համար լրատվական գործունեություն իրականացնողի դիմումը ստանալուց անմիջապես հետո գրանցվում է հավատարմագրման մատյանում, որտեղ նշվում են նաև սույն կարգի 7-րդ կետով նախատեսված տեղեկությունները: Հավատարմագրման մատյանում գրանցվում են լրագրողին հավատարմագրելու կամ հավատարմագրումը մերժելու մասին գրառումները, դրա մասին լրատվական գործունեություն իրականացնողին պաշտոնական գրություն ուղարկելու օրը, հավատարմագրման ժամկետը, հավատարմագրման դադարեցման մասին նշումը, հավատարմագրման դադարեցման համառոտ հիմնավորումը և անհրաժեշտ այլ տեղեկություններ:

13. Սույն կարգի 7-րդ կետում նշված դիմումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում լրագրողը հավատարմագրվում է կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է կայացում՝ հավատարմագրումը մերժելու մասին: Որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է լրատվական գործունեություն իրականացնողին:

Հավատարմագրված լրագրողին տրվում է վերջինիս հավատարմագրումը հավաստող վկայական: Հավատարմագրված լրագրողի վկայականի ձևը սահմանվում է սույն որոշման թիվ 2 հավելվածով:

14. Հավատարմագրման ժամանակահատվածի ընթացքում հավատարմագրված լրագրողի վկայականը կորցնելու դեպքում դրա փոխարեն տրվում է նոր վկայական՝ այդ մասին Հանձնաժողովի նախագահին գրավոր ծանուցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

15. Լրագրողի հավատարմագրումը մերժվում է, եթե՝

1) սույն կարգի 7-րդ կետում նշված դիմումը չի բովանդակում սահմանված տեղեկությունները կամ խախտվում են սույն կարգի 8-րդ և 10-րդ կետերի պահանջները,

2) դիմումը ներկայացվել է հավատարմագրման համար սահմանված ժամկետի խախտմամբ.

3) առկա է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու՝ սույն կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հիմքերից որևէ մեկը: Այս դեպքում

լրատվական գործունեություն իրականացնողը կարող է հավատարմագրման ներկայացնել այլ լրագրողի:

Եթե ներկայացված դիմումը չի պարունակում սույն կարգի 7-րդ կետով նախատեսված տեղեկությունները կամ դիմումին կցված չեն սույն կարգի 8-րդ կետով պահանջվող փաստաթղթերը կամ խախտված է սույն կարգի 10-րդ կետում նշված պահանջը, ապա դիմումը վերադարձվում է՝ նշելով թույլ տրված թերությունները՝ տրամադրելով շտկելու համար ողջամիտ ժամկետ: Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում՝ հավատարմագրումը մերժվում է:

16. Հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցվում է, եթե՝

1) լրագրողը մահացել է, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է մահացած, անհայտ բացակայող, անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) լրագրողի նկատմամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ.

3) լրատվական գործունեություն իրականացնողը մեկ անգամ նախազգուշացվել է լրագրողի կողմից օրենքների, սույն կարգի պահանջները խախտելու կամ Հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար և լրագրողը կրկին խախտել է օրենքների, սույն կարգի պահանջները կամ խոչընդոտել է Հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարումը.

4) հավատարմագրումը դադարեցնելու մասին գրավոր դիմել է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը.

5) դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը.

6) «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի հիմքերով:

Օրենքների, սույն կարգի պահանջները խախտելու կամ Հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում՝ գրավոր նախազգուշացվում է լրատվական գործունեություն իրականացնող այն անձը, որի անունից հավատարմագրվել է լրագրողը:

Լրատվական գործունեություն իրականացնողն իրավունք ունի հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցված լրագրողի փոխարեն հավատարմագրման ներկայացնել այլ լրագրողի:

17. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման դադարեցման հիմք է նաև Հայաստանի Հանրապետությունում նրա հավատարմագրման դադարեցումը կամ հավատարմագրումից զրկելու մասին

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կայացրած որոշումը:

18. Լրագրողի հավատարմագրման դադարեցման մասին ընդունվում է որոշում, որն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողին և այն լրագրողին, որի հավատարմագրումը դադարեցվել է:

19. Հանձնաժողովում լրագրողն իր աշխատանքը կազմակերպում է «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ օրենքներին, սույն կարգին և ընտրական հանձնաժողովի կանոնակարգին համապատասխան՝ հարգելով Հանձնաժողովի աշխատակիցների օրինական շահերը, պատիվն ու արժանապատվությունը և չխոչընդոտելով Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը:

20. Հավատարմագրված լրագրողն իրավունք ունի՝

1) ստանալու լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվություն.

2) նախապես տեղեկացված լինելու Հանձնաժողովի միջոցառումների անցկացման մասին, մասնակցելու այդ միջոցառումներին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

3) հավատարմագրված այլ լրագրողների հետ ազատորեն, առանց որևէ խտրականության օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից.

4) օգտվելու լրագրողների համար օրենքով սահմանված այլ իրավունքներից:

21. Հավատարմագրված լրագրողը պարտավոր է՝

1) հարգել Հանձնաժողովի աշխատակիցների օրինական շահերը, պատիվն ու արժանապատվությունը.

2) չխոչընդոտել Հանձնաժողովի անդամների և աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը.

3) Հանձնաժողովի նստավայր մուտք գործելիս ներկայացնել վկայականը, Հանձնաժողովի վարչական շենքում գտնվելու ընթացքում հագուստի վրա տեսանելի կրել վկայականը.

4) պահպանել օրենքների, ընտրական հանձնաժողովների կանոնակարգերի և սույն կարգի պահանջները:

22. Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի, անդամների և աշխատակիցների աշխատասենյակներում լրագրողները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել միայն վերը նշված անձանց թույլտվությամբ կամ համաձայնությամբ:

23. Չնախատեսված միջոցառումների, նիստերի ընթացքում, ինչպես նաև Հանձնաժողովում լուսաբանման ենթակա միջոցառումներին մասնակցելու նպատակով չհավատարմագրված լրագրողներին կարող են տրամադրվել անցագրեր:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2023թ. հուլիսի 18-ի N 17-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԿԱՅԱԿԱՆ N _____

Լուսանկար

[նշվում է լրագրողի անունը, ազգանունը]

[նշվում է լրագրող, լուսանկարիչ կամ տեսաձայնագրման օպերատոր]

[նշվում է զանգվածային լրատվության միջոցի անվանումը]

տրված _____թ.
վավեր է մինչև _____թ.

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Կ.Տ.